Արձանագրության 4
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար փաստաթղթերի արխիվացման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/82» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 06.05.2019թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալբաբյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հովակիմյան /գնահատող/, Գ. Սաֆարյան/գնահատող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան /բացող/, Ա. Մնացականյան /բացող/
Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Բալբաբյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Աղասին Էլիզբարյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել «Աղասին Էլիզբարյան» Ա/Ձ -ի հայտը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/82» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Բալբաբյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ	Բավարար
«Աղասին Էլիզբարյան» Ա/Ձ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/82» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Բալբաբյան)

1.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/82»** ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին: «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված 2-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Բալբաբյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար փաստաթղթերի արխիվացման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բալբաբյան

Անդամներ՝ ---------- Ա. Հովակիմյան

---------- Գ. Սաֆարյան

---------- Գ. Հակոբյան

---------- Ա. Մնացականյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան